Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԿ ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ

N 1-Ա 19 հունիսի 2025թ.

ՀՐԱՄԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ՍԱԲԿ-ԷԱՃԱ ՊՁԲ-	3	Դյուրակիր էլեկտրական լամպեր ր		ՍՈՊՐԱՆՈԳՐՈՒՊՍՊԸ	08287363	ԿԻԵՎՅԱՆ Փ. / Շ / 8 / 62 ԲՆ. ԱՐԱԲԿԻՐ 0028	06.06.2025թ.	«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ	1-ին սյունակում նշված ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.15 կետ (հրավերով սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները)	Առկա չէ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ
ստորագրություն

Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039

հեռ.՝ 010303010

mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ 116 -353 19, 06 2025թ.

Որոշում N ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/36

«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/36» ծածկագրով տնտեսական և շինարարական ապրանքների ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ. Մասնակցի կողմից կցված հավելվածները հաստատված չէին էլեկտրոնային թվային ստորագրությամբ, անհրաժեշտ էր շտկել հեռախոսահամարը, կազմակերպության ռուսերեն անվանումը, Հավելված 1-ում բացակայում էր փոխկապակցված անձինք արտահայտությունը, ինչպես նաև անհրաժեշտ էր հստակեցնել տեխնիկական բնութագիրը , նշել արտադրողը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 04.06.2025 թվականին ծանուցվել էր Մասնակցին հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել են:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

Ընթացակարգի չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 09.06.2025 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

ՏՆՕՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների մասնագետ
Հեռ. /010/ 30 30 10 /4/